

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

N	Օրենսդրական ակտի անվանումը	Նշումներ, ներկայացում
1.	<p>ՊՏ N 67(1247) սեպտեմբերի 7, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կառավարության՝ 18.08.2016թ. N 882-Ն Որոշում՝</i></p> <p><i>«ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ճանաչելու, աշխատանքային գրքույկները ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 16.06.2006թ. N 876-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. -ի հունվարի 1-ից:</i></p>	<p>Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 22.06.2015թ-ի թիվ ՀՕ-96-Ն օրենքի 57-րդ (անցումային դրույթներ) հոդվածի 2-րդ մասը:</p> <p>Այսպիսով, աշխատանքային գրքույկներում ներառված, աշխատողի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներառվելու է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում, որի համար ՀՀ կառավարությունը լիազորել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ սոցիալական ապահովության պետական ծառայությանը, այսուհետ՝ Ծառայություն:</p> <p>Սահմանվել է աշխատանքային գրքույկները լիազոր մարմնին ներկայացնելու, ապա նաև՝ աշխատողներին հանձնելու կարգը:</p> <p>Համաձայն սահմանված կարգի սոցապ. ծառայության պաշտոնական կայքէջում՝ www.ssss.am, կներկայացվի մինչև 100 աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները համապատասխան տարածքային բաժին ներկայացնելու ժամանակացույցը: Բացի այդ, 100-ից ավել աշխատող ունենալու դեպքում ժամանակացույցը փոխհամաձայնեցվում է գործատուի հետ: Ամեն դեպքում ծառայությունը մինչև 01.03.2017թ. պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով ծանուցում է գործատուին գրքույկները ներկայացնելու ժամկետների մասին:</p> <p>Հատկանշական է, որ սոցապ. ծառայությունում համապատասխան գրանցումները կատարելուց, շտեմարան մուտքագրելուց հետո գրքույկները հետ են վերադարձվում գործատուին, որն էլ իր հերթին դրանք պետք է հանձնի աշխատողին:</p> <p>Սույն որոշմամբ նաև ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 16.06.2006թ. «Աշխատանքային գրքույկի ձևը, աշխատանքային գրքույկ վարելու և կրկնօրինակ տրամադրելու կարգը սահմանելու մասին», ՀՀ կառավարության՝ 16.06.2006թ-ի N 876-Ն որոշումը:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>2.</p>	<p>ՊՏ N71 (1251) Մեպտեմբերի 30, 2016թ. <i>ՀՀ Կառավարության 02.09.2016թ. N 980-Ն Որոշում</i>¹ <i>ՀՀ Կառավարության 17.10.2001թ. N 986 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին</i> <i>Որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. -ի հունվարի 1-ից: (*)</i></p>	<p>Խոսքը վերաբերում է ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» որոշմանը:</p> <p>Այսպիսով</p> <ul style="list-style-type: none"> • սահմանվում է վերոնշյալ վճարների, այսուհետ՝ Վճար, հաշվարկ- հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը, այսուհետ՝ Կարգ>(* ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին և ՀՀ բնապահպանության նախարարին Կարգով նախատեսված վճարները ներկայացնելու անհրաժեշտ կարողությունների ապահովումն իրականացվելու է ֆինանսավորում ստանալուց հետո 6 ամսվա ընթացքում: Իսկ Կարգի դրույթները տարածվում են վերոնշյալ «ապահովման» եռամսյակին հաջորդող հաշվետու եռամսյակի վրա:) • Վճարներ վճարող անձինք մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն գրանցման են ներկայացնում <u>թղթային եղանակով</u>. • վերոնշյալ հաշվարկ-հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև <u>էլեկտրոնային եղանակով</u>¹՝ համաձայն Կարգի (խոսքը վերաբերում է այն Վճարողներին, որոնք հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր կամ հարկային մարմնի հետ կնքել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագիր)
<p>3.</p>	<p>ՊՏ N73 (1253) Հոկտեմբերի 5, 2016թ. <i>ՀՀ Կառավարության 29.09.2016թ. N 988-Ն Որոշում</i>¹</p>	<p>Խոսքը վերաբերում է «Առանձին կատեկորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» որոշմանը:</p> <p>Այսպիսով վերոնշյալ աշխատանքների ցանկում հիդրոօդերևութաբանության ոլորտի օդերևութաբանական, ակտիվությունների (ճառագայթաչափական), օգոնաչափական դիտարկումներ իրականացնող մասնագետների կողմից կատարվող աշխատանքներին <i>ավելացել է</i> նաև ռադիոլոկացիոն դիտարկումներ և հակակարկտային ներգործություն իրականացնող մասնագետների կողմից կատարվող աշխատանքները:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>ՀՀ Կառավարության 11.08.2005թ.-ի N 1223-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	
<p>4.</p>	<p>ԳՆԱՏ N21 (564) Հոկտեմբերի 17, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշում՝</i></p> <p><i>ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 27.01.2009թ. որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին</i></p>	<p>Այսպիսով նոր խմբագրությամբ հաստատվում է «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» որոշման Հավալված 1,2-ը:</p> <p>Այս մեխանիզմը գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Հստակեցվեց, որ պետական ռեգիստրը կանոնադրական կապիտալի ձևավորման կամ դրա հետ որևէ փոփոխության պարագայում պետք է պահանջի տեղեկատվություն իրական շահառու ֆիզիկական անձի վերաբերյալ՝ կոնկրետ ներկայացնելով տեղեկատվություն՝ ըստ սահմանման.</p> <ul style="list-style-type: none"> • իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ • փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ • քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ</p> <ul style="list-style-type: none"> • հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ • գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ էլնելով ընդհանուր տնտեսական շահերից <p>Հայտարարությամբ հավաքագրված տեղեկատվությունը ներկայացվում է ԿԲ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն:</p>
<p>5.</p>	<p>ՊՏ N77 (1257) Հոկտեմբերի 26, 2016թ. <i>ՀՀ Օրենքը 28.09.2016թ.՝</i></p> <p><i>«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Օրենքն ուժի մեջ է մտնում 01.01.2017թ.-ից:</i></p>	<p>- Հաստատագրված վճարը վերաբերում է «անհատ ձեռնարկատեր» -ին: - Տեխնիկապես, հանվեց «իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններ» հասկացությունը:</p> <p>- Ավտոտրանսպորտային գործունեության և վիճակախաղերի կազմակերպման իրականացնողների կողմից հայտարարությունների և այլ տեղեկությունների ներկայացման նոր, ավելի հստակ կարգ է սահմանվել:</p> <p>- Բացառապես Օրենքով սահմանված գործունեություն իրականացնելու և այլ տեսակի հարկվող օբյեկտ չունենալու դեպքում վճարողները հարկային տեսչության մարմին կարող են ԱԱՀ հաշվարկից բացի չներկայացնել նաև շահութահարկի հաշվարկ:</p> <p>- Եթե նախկինում հաստատագրված վճարի վճարումը կատարվում էր վճարողի կողմից ինքնուրույնաբար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ, ապա այժմ պետք է կատարվի՝ մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ:</p>
<p>6.</p>	<p>ՊՏ N77 (1257) Հոկտեմբերի 26, 2016թ.</p>	<p>- Ուժը կորցրած է ճանաչվել 1/2 ենթակետը, համաձայն որի ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N 875-Ն հրամանով հաստատված արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ)</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>ՀՀ Կառավարության 13.10.2016թ. N 1045-Ն որոշում՝</p> <p>18.02.2016թ. N 141-Ն և 28.04.2016թ. N 415-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>առնվազն 2-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (2 նիշ):</p>
<p>7. ՊՏ N77 (1257) Հոկտեմբերի 26, 2016թ. ՀՀ Օրենքը 28.09.2016թ.՝</p> <p>«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին</p> <p>Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>Լրացվել է 98-րդ հոդվածը՝ կապված մաքսային արտոնությունների հետ՝ մասնավորապես, այժմ մաքսավճարից ազատվում են նաև մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ սահմանով տեղափոխվող՝ ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չզերազանցող գումարի չափով ապրանքները:</p> <p>Ուժը կորցրած է ճանաչվել 157/3 մասը՝ համաձայն որի հայտարարատուն մաքսային ձևակերպումներն իրականացնում է իր հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող մաքսային ձևակերպումների մասնագետի միջոցով:</p>
<p>8. ՀՀ ԳՆԱՍ N22 (565) 1 նոյեմբերի, 2016թ.</p>	<p>Խոսքը վերաբերում է գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը բաշխելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251 հոդվածի 3-րդ մասի կիրառելիությանը հրապարակային սակարկություններով գրավի առարկան գրավառուի կողմից ձեռք բերելու դեպքերին:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>ՀՀ ԿԲԽ թիվ 4 Պաշտոնական պարզաբանում, ընդունված՝ 14.10.2016թ.</i></p> <p><i>«Հրապարակային սակարկություններով գրավի իրացման հետ կապված ՀՀ Քաղ.օր. 251-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման մասին»</i></p> <p><i>Ուժի մեջ է՝</i></p> <p><i>10.11.2016թ.</i></p>	<p>Արդյո՞ք գրավառուն պետք է առաջնորդվի 251/3 մասով այ դեպքում, երբ գրավի առարկան դարձել է գրավառուի սեփականությունը հրապարակային սակարկություններից առուվաճառքի պայմանագրով ձեռք բերելու եղանակով:</p> <p>Հաշվի առնելով հրապարակային սակարկությունների հիմնական սկզբունքները՝ թափանցիկության, սակարկությունների բոլոր մասնակիցների հավասար կարգավիճակի, սակարկությունների մասնակիցների կողմից վաճառվող գույքի գինը չորոշելու, կարող ենք փաստել, որ ֆինանսական կազմակերպությունները, մասնակցելով հրապարակային սակարկությանը, հանդես չեն գալիս, որպես գրավառու, գրավի կամ այլ պայմանագրի կողմ: Նրանք սակարկության ցանկացած այլ մասնակցի հետ ունեն հավասար իրավական կարգավիճակ. ինքնուրույն են գնահատում իրենց ռիսկերը, ունեն հնարավորություն գնելու կամ չգնելու լուր՝ ձևավորված գնով: Հետևաբար ստացվում է, եթե 251/3 գործի ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, ապա պետք է գործի նաև սակարկության ցանկացած այլ մասնակցի նկատմամբ:</p> <p>Այսպիսով ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը պաշտոնապես պարզաբնել է, որ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հրապարակային սակարկություններից՝ իրենց մոտ գրավ դրված գույքը առուվաճառքի պայմանագրով ձեռք բերելու դեպքում՝ ՀՀ Քաղ.օր 251/3 մասի կիրառելի չէ:</p>
<p>9.</p>	<p>ՊՏ N78 (1258) Նոյեմբերի 2, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կառավարության 20.10.2016թ., 1068-Ն</i></p> <p><i>ՀՀ Կառավարության 11.08.2005թ. N 1384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին</i></p>	<p>Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկում ավելացվել է <i>էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կարգավարներ</i> կատեգորիան, ընդ որում՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով աշխատելու դեպքում՝ 6, իսկ վեցօրյա աշխատանքային ռեժիմով աշխատելու դեպքում՝ 7 աշխատանքային օր լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքով:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

*Որոշումն ուժի մեջ է մտնում
պաշտոնական հրապարակման
հաջորդող օրվանից:*

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն: